

բաստումս վկայականները իրենց կանոնադրութեան տեսակետով իրարմբ գրանառումս են յոյն և օտար պաշտօնական շրջանակներու մէջ և որոնք պաշտօնանցագրի տեղ կ'ընդունի ամենուրեք:

Յստատանի Հայութեան ամենալաւ կազմակերպումս կողմը Հ. Բ. Բ. Միութիւնն է որուն Ընդհ. կեդրոնն է Սելանիկը իր մասնաճիւղերը ունենալով նաև Վօլո և Լարիսի շրջակայքը որը շատ կանոնաւոր կերպով յառաջ տարուելու վրայ է, ջանքեր սկսած են նաև Ս.Յ.Ն.քի և շրջանները եւս ճիւղեր կազմել, երանի թէ միւս ազգային և եկեղեցական գործերն ալ նոյն կանոնաւորութիւնը ունենային:

Վօլո և Լարիսա այսինքն թեալ իոյ շրջանի Հայութիւնը մօտաւորապէս 35-40 դանազան դիրքերու տէր անձեր Հայութեան ամբողջութեան շարժումին միշտ հետևելու պատրաստ սակայն դժբախտաբար արդէն Յունաստանի Հայութիւնը որը և կղիացած վիճակ մը ունի և բոլորն ալ արգարացի կերպով տըրտունջ կը յայտնեն, մանաւանդ Հայութեան համար արդի յոյս խորհրդաւոր և կենսական շրջանին հանդէպ, որովհետև բանէ մը տեղեկութիւն չունին:

Աթէնք և Բիրքա շրջակայ կղիներու և մօտակայ քաղաքներու Հայութիւնը կը հաշուուի մօտաւորապէս 120 անձեր մասամբ իզմիրէն ապաստանած ունին շատ փոքրիկ մասուտ մը, որը Հայութեան շինարար յատկութեան երբեք պատիւ չի բերեր, սրուած ըլլալով յունական մայրաքաղաքին մէջ Հայութեան և իր գործունէութեան նմոյշ մը, այն ալ ժամանակին հոն կարեւոր և մընայուն դաղութ մը չգտնուելուն և անհատական առ ու ան օժանդակութեամբ ձևը թերուած ըլլալուն համար Հոս և

կեղեցոյ թաղական կորուստը վերջին 2-3 տարուայ իր գործունէութեամբ փոքրուող լիովին գոծ թողուցած չէ, որ վերջերս հոն գտնուած միջոցիս Աղգ. Ընդհ. Ժողով գումարուելով, նոյն թաղ. կորհրդոյ Պրն. Ատենապետ Վ. Նիկողոսեանի համարատուութիւնը լսելէ նաև ժողովուրդին կողմանէ փաստացի կերպով նոյն թաղ. կորուստը հակազգային գործունէութիւնը բացատրուելէ վերջ Աղգային Ընդհանուր Ժողովը միաձայնութեամբ թաղականութիւնը հրաժարեցուցած է, որովհետև ինչպէս վերև յիշած եմ ինք. վկայագիրներու իւրաքանչիւր ազգայիններու բաժանումին մէջ կամայական դրամական պահանջումներով և անձնական չնչին հաշիւներով 15 ազգայիններու ինք. վկայականները տրուած չեն, այսպէսով նոյն ազգայիններէն կարծեմ 3-հոգի յոյն կառավարութեան կողմանէ ղինուոր տարուած են քանի որ յոյն պաշտօնէութեան պահանջած օրինակին ինք. վկայագրերը չէին կրցած ներկայացնել, նոյնպէս, թաղ. կորուստը ներկայացած բազմաթիւ փախստական գողթական Հայերու պէտք եղածին պէս օգնութեան հասած չէ, նոյնիսկ անձնական կամ եսի հաշիւներով նոյն հրաժարեցուցուած թաղ. կոր. ատենապետը ուղած չէ ճանչնալ Սելանիկի հայ եկեղեցոյ կողմանէ տըրուած ինք. վկայագիրները, որովհետև յոյն և օտար պաշտօնական մարմինները կը պահանջեն որ իւրաքանչիւր հայ ճամբորդ պարտաւոր է իր հասած քաղաքին թաղ. կորուստը կողմանէ վիզէ ըլլայ իր վկայականը սրբապաշտ հայկական դօնախաւ մը, այսպէսով թէ օտար շրջանակներու առջև անյուսալի խնդիրներ հանելով նոյնպէս անցորդ Հայերու եւս նիւթական պահանջներով մասսակար դարձած է. նոյն թաղ. կորհուրդին Պ. Ատենապետն է միայն պատասխանատու իր աղքատներ գործունէութեան քանի որ շատ գործեր իր կամքով միայն կատարած է ատանց միւս անգամներու տեղեկութիւն ստալու, որով ժողովուրդին մէջ ընդհ. դաշրոյթ յառաջ գալով դանոնք հրաժարեցուցած են, ընտրելով նոր թաղ. կորուստը ժողովուրդին վստահութիւնը վայելող հետևեալ անձերը. Տեաքք. Կիրակոս Բէշիշեան, Ո. Նիկոթեան, Յ. Գըլըճեան և Տ. Մատեան, նորընտիր թաղ. կորուստը անմիջապէս իր ընտրութիւնը պաշտօնապէս հաղորդած է պատկանեալ պաշտօնատան Հին թաղ. կորուստը Պրն. ատենապետը ատեն մը իր քով գտնուած պաշտ. կնիքը հաշիւները ինչպէս նաև տեղաբնակները վկայականները ստալ ուղած չէ սակայն ի վերջոյ ստիպմանց վրայ տեղի տուած է:

Սելանիկի Աթէնքի նաև Յունաստանի ընդհ. Հայութիւնը կատարելապէս անտեղեկ է ազգային կենսական շահերու տեսակէն ու և է շարժումներէ որպէսզի նա եւս կարողանար իր ճայնը միացնելու ընդհանուրին, եպիպոսի և Ամերիկայի Հայութեանց, նոյնպէս կըրնամ ըսել թէ կրօնական և եկեղեցական յարաբերութեանց տեսակետով ալ գրեթէ որբացած լնայած են:

Ներկայ մեծ պատերազմին մէջ շատ անգամներ տեսնուած են թէ բանակի մը հրամանատարը և սպաները սպաննուելէ և կորսուելէ վերջ, բանակին մէջէն պարզ ղինուոր մը հրամանատարութիւնը ձեռք առնելով պատերազմը շարունակած և յաղթանակած է, այսպէս նաև պէտք էր մեղի Հայերու համար, քանի որ չեղող քանակը Հայութեան կեդրոններէ թրջահայութեանէ և կովկասահայութեանէ, միշտ սերտ յարաբերութեանց մէջ գտնուելով իւրաքանչիւր երկրամասի Հայութեանց հետ պէտք եղած պահուն միաձայն կերպով աշխատելու և արտայայտուելու համար, իսկ մենք ամէն բան կ'սպասենք միայն մէկ կողմէ և մէկ անձէ, կատարուելիք կամ նախապատրաստուելիք հսկայ գործեր կան Մենք կ'սպասենք ու կ'աշխատենք, ունինք որբերը, ունինք գաղթականները ունինք հայրենիքի դժբախտ տարազեր սովածները, ունինք հարկման տարուած հաշարաւոր գերիները ունինք պատերազմական գերիները որոնք բոլորովին հրեղէ թողուած են, ու պիտի ունենանք նաև Երկիր վերադարձի անուոր գործը որուն այժմէն իսկ պէտք է նախապատրաստութիւններ ընել, և տակաւին ուրիշ այլ և այլ կարեւոր հարցեր, իսկ մենք կը քննանք:

Վերջին ատեններս «Մողտտամ» հեռագրին վրայ ընդհանուր Հայութեան վրայէն կարծես թէ ելեկզբական հոսանք մը անցաւ Հայաստանը Անկախ, ու դարձեալ կ'սպասենք...

Տակաւին մինչև այսօր հայ մարտիկ աղբը իր միլիոնաւոր զոհերով չը կրցաւ իր պատերազմիկ ալք ճանչնելու մեծ պետութեանց կողմանէ ինչպէս վաղուց ճանչցուած են Ձեք. Սլօվաքները, Բօլօնիացիները, եւս և հակառակ անոր որ Հայ Աղբը պատերազմին զկիւրքէն իսկ իր կամաւորներով ֆրանսական, ռուսական և բանակներու մէջ ապացուցը շատ անգամներ տուաւ, ինչո՞ւ այլ մտօք և ուղղութեամբ շարժում մը չեղաւ քանի որ վերջերս անդդ. կատալութիւնն ինք եւս պաշտօնապէս յայտարարած է թէ կովկասի հայ բանակը մասուցած է թանկագին ծառայութիւն Պաղտատի և Պաղեստինի անդդ. բանակներուն 5-6 ամիսներ դադարեցնելով թուրք բանակը, որով այս վերջինք չը կրցան քաշել իրենց բանակները հայկական սահմաններէ զրկելու համար Պաղտատ և Պաղեստին:

Հայ աղբը այլուս մեծ պահանջատէր մըն է ոչ խնդրարկու քանզի իր միլիոնաւոր զոհերով, կամաւորներով և հերոսներով վաղուց շահած է իր դատը, իսկ այսօր անա իր կամաւոր ղինուորները իր հարազատ դաւակնորը երկու կողմէ մտած են անբանալու այն պատուական հոգիքը որ կը կոչուի Հայաստան

ԿԱՐԱՊԵՏ ՄՈՍԿՆԵՐԵԱՆ

ՅՈՒՆԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԳՈՐԾՈՒՆԵՒԹԻՒՆԸ

Յունաստան մնացած 3 տարուայ ժամանակամիջոցիս այցելեցի բաւական հայաշատ կեդրոններ որոնցմէ կրամ տըպաւորութիւններս հետեւեալներն են:

Սկսելով Սելանիկէն ուր կը գտնուին Հայութեան մեծամասնութիւնը մօտաւորապէս 450 հոգի. ունի փոքրիկ յոյս սիրուն եկեղեցի մը բուն հայկական ոճով շինուած ըլլի մանկապարտէզի և վարժարանի շէնքով, ուր կը տրուին հանգէսներ և հաւաքոյթներ Սելանիկի Հայութիւնը իմ վրայ թողուցած կատարելապէս ընտանեկան շրջանակի մը երեւոյթը, իրարու մօտիկ և տաք վերաբերում մը իւրաքանչիւր Հայու պարտականութիւնը եղած է, նոյն իսկ իրարու մէջ պատահած զանազան դատական գործեր տեղոյն թաղ. կորհուրդին կողմանէ սիրով և հաշտութեամբ կարգադրուելով, երկու կողմէ դատի տէրեր դանազան բարենպաստ կանգնակութիւններու ինչպէս կարեւորութեան սահմանին նուէրներ դանդուած են, այս կերպը բաղձալի էր նաև պէն տեղերու Հայութեան: Հոս Հայութիւնը գրեթէ իրարու կապուած տեղական ցաւեր դարձանելէ վերջ լայն շարժում և յաճախ կը մտածեն իրենց ստաղալի աղքատներուն, եթէ չեմ սխալիր մինչև այսօր այլ և այլ նպատակներով մօտաւորապէս 25-30000 տրախմի հաւաքուած և ղրկուած է իր պատկանեալ մարմիններուն, հոս Հայութիւնը հանդէպ օտարազգիներու միշտ ճանչցուած և պէտք եղած պարապաներուն արժանաւոր կերպով ներկայացուած է յանձին Տեաք Լեւոն Երիւնեանի, Կ. Շամտանեանի, Օ. Չաքարեանի, Գ. Պօյաճեանի, Մ. Պըլըղեանի եւս դատուաւոր աղգայիններու միջոցաւ:

Ինչպէս ամբողջ Յունաստան նոյնպէս Սելանիկ նախաձեռնութիւնը հոս ըլլալու պոյժմանաւ յունական կառավարութեան հրամանին վրայ իւրաքանչիւր թաղ. կորուստը իրարու մէջ անկախ ամէն Հայու ինքնութեան վկայականներ, որոնց վրայ պէտք էր նշանակուէր ունձագրի մը հարկ եղած մասնաձեռնութիւնները, այս ամթիւ պատ